

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՊՅ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 80-ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ Երևանի պետական համալսարանի հնագույն ֆակուլտետներից մեկի՝ իրավագիտության ֆակուլտետի ստեղծման 80-ամյակը: Այս տարեդարձին ֆակուլտետը մոտեցավ ակնառու ձեռքբերումներով, բարեփոխումների լայնամասշտաբ, խոստումնալից ծրագրերով: Իրավագիտության ֆակուլտետի վերջին տարիների կարևոր նվաճումներից է միջազգային կապերի ընդլայնումը, արտասահմանյան տարբեր բուհերի, կազմակերպությունների և անվանի գիտնականների հետ համագործակցությունը:

ԵՊՅ իրավագիտության ֆակուլտետի՝ միջազգային ասպարեզում ունեցած մեծ հեղինակության վկայությունն էր ֆակուլտետի ստեղծման 80-ամյակի կապակցությամբ 2013 թ. սեպտեմբերի 23-24-ը Դիլիջանում կազմակերպված «Իրավական կարգավորման կատարելագործման արդի հիմնախնդիրները. ազգային և միջազգային տեսանկյուններ» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Վրաստանի և Հայաստանի անվանի գիտնականներ ու պրակտիկ աշխատողներ:

Գիտաժողովը բացվեց ԵՊՅ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ իրավաբանների միության նախագահ, իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊԱԱ թղթակից անդամ Գ. Ս. Ղազինյանի, Իրավաբանների միջազգային միության նախագահ, իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Տրեբկովի և Գերմանիայի Դաշնային գերագույն դատարանի դատավորների ու դատախազների ասոցիացիայի պատվիրակության ղեկավար, դոկտոր Վ. Շլիկի ողջույնի խոսքերով:

Այնուհետև իրավունքի տարբեր ոլորտներին առնչվող հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան գիտաժողովի մասնակիցները:

Պետք է նշել, որ կարդացված բոլոր զեկուցումները վերաբերում էին խիստ արդիական թեմաների և աչքի էին ընկնում գիտական բարձր մակարդակով: Այնուամենայնիվ դրանցից կարելի է առանձնացնել հատկապես այն զեկուցումները, որոնցում քննարկվեցին իրավունքի տարբեր ոլորտներին վերաբերող գլոբալ հիմնախնդիրներ:

Մասնավորապես, ՌԴ Նախագահի խորհրդական, ՌԴ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Յակովլևը զեկուցեց ԱՊՀ երկրների քաղաքացիական օրենսդրությունների կատարելագործման ու ներդաշնակեցման ձևերի մասին, ինչը ներկայումս արդիական է և պայմանավորված է ԱՊՀ երկրների միջև տնտեսական կապերի զարգացմամբ և հատկապես մաքսային միությանը անդամակցելու հեռանկարով:

Գերմանիայի Ղաշնային գերագույն դատարանի դատավորների ու դատախազների ասոցիացիայի պատվիրակության ղեկավար, դոկտոր Վ. Շլիկը շատ հետաքրքիր զեկուցում ներկայացրեց արբիտրաժային հարաբերություններում ազգային իրավական համակարգերի և իրավասությունների մրցակցության վերաբերյալ:

ՌԴ գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, ՌԴ կառավարությանը կից օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտի տնօրեն, իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Յա. Խաբրիևան քննարկման առարկա դարձրեց սահմանադրական իդեալների և սահմանադրական օրենսդրության ժամանակակից իրողությունների փոխհարաբերակցության հարցը, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյանի զեկուցումը նվիրված էր մարդու սոցիալական վարքագծում և իշխանությունների հանրային վարքագծում իրավունքի գերակայության տեղի ու դերի հարցին:

Արտասահմանյան երկրների քրեական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի՝ Մաքս Պլանկի անվան ինստիտուտի տնօրեն, Ֆրայբուրգի համալսարանի պրոֆեսոր Հանս-Յորգ Ալբրեխտի զեկուցումը նվիրված էր անչափահասների հանցավորության միտումներին և անչափահասների հանցավորությանը վերաբերող տեսություններին, իսկ Թբիլիսիի Գ. Ռոբակիձեի անվան համալսարանի պրոռեկտոր Գ. Գլոնտին ներկայացրեց վիկտիմիզացիայի վիճակը Վրաստանում:

Ձեկուցումներում բարձրացված հիմնախնդիրները բազմաթիվ հարցերի ու լայնածավալ քննարկումների տեղիք տվեցին:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփելը դեռ վաղ է: Այնուամենայնիվ կարելի է փաստել, որ այս գիտաժողովը մասնակիցների ներկայացուցչականությամբ, կարդացված զեկուցումների թեմաների բազմազանությամբ, բարձրացված հիմնախնդիրների ընդգրկունությամբ ու խորությամբ մեր իրականության մեջ աննախադեպ երևույթ էր:

Նախատեսվում է գիտաժողովում կարդացված բոլոր զեկուցումները երեք լեզուներով (հայերեն, անգլերեն և ռուսերեն) հրատարակել առանձին ժողովածուներով:

Գիտաժողովի գործնական արդյունքներից էր Արտասահմանյան երկրների քրեական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի՝ Մաքս Պլանկի անվան ինստիտուտի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև կնքված փոխգործակցության պայմանագիրը, որը մեծ հեռանկարներ է բացում համատեղ գիտական հետազոտությունների և կադրերի փոխանակման ոլորտում:

ԱՐԱ ԳԱՐՈՒԶՅԱՆ